

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ**

Բյուջեն, լինելով համայնքի եկամուտների ձևավորման ու ծախսերի կատարման տարեկան ֆինանսական ծրագիր՝ կազմված է <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի դրույթներին համաձայն /աղյուսակները կցվում են/, ուղղված է Տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում համայնքային ծրագրերի իրականացմանը: Այն ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծրագրերի ու միջոցառումների համապարփակ թվարկումն է գալիք ֆինանսական տարվա համար՝ Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության յուրաքանչյուր բնագավառում: Որպես պոտենցիալ սպառողների միջև սահմանափակ միջոցների համապարփակ և հետևողական բաշխում՝ բյուջեն Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ֆինանսական կառավարման հիմնառանցքն է: Որքան լավ կազմակերպվի բյուջետավարման գործընթացը, այնքան արդյունավետ կլինի համայնքի աշխատանքը: Գորիս համայնքի տարեկան ֆինանսական ծրագիրը հիմնված է հնգամյա զարգացման ծրագրի, միջնաժամկետ ծախսերի ծրագրի, տարեկան աշխատանքային պլանի, ինչպես նաև համայնքի 2023 թվականի ֆինանսական գործունեության արդյունքների վրա:

Հաշվի առնելով Գորիս համայնքի հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված գերակայությունները և առկա ռեսուրսները, ընթացիկ տարում իրականացված ծրագրերի արդյունավետությունը ու դրանց զարգացման միտումները, 2024 թվականի համայնքի զարգացման հիմնական ուղղությունները միտված են լինելու բնակչության կենսապայմանների բարելավմանը, բարեկեցիկ ու հարմարավետ միջավայրի ձևավորմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանը ու զարգացմանը:

Գորիս համայնքի զարգացումը 2024 թվականի խարսխվելու է սոցիալական, մշակութային, բարեկարգման, կանաչապատման և համայնքի կայուն ու նպատակային առաջընթացը ապահովող այլ կարևոր ուղղությունների արդյունավետ լուծմանն ուղղված քայլերի հետևողական իրագործման հիմքի վրա:

2024 թվականի Գորիս համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են.

- Ստեղծել բոլոր երեաշխիքները Գորիս համայնքի խաղաղության ամրապնդման, սահմանների ապահովման, բնակչության անվտանգության համար:
- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցների:

• Բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքի աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների աշխատանքի արդյունավետությունը:

• Ժամանակի պահանջներին համապատասխան համայնքային միջավայրի ստեղծումը, հասարակական կյանքի ոլորտներում Գորիս համայնքի տարածական համաչափ զարգացման և պլանավորման ապահովումը:

• Տեղական ինքնակառավարման արդյունավետության ապահովումը, համայնքի կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների պարզեցումը ու որակի էական բարձրացումը:

• Երթևեկության ինտենսիվության աճի, ուղևորափոխադրումների ու բեռնափոխադրումների անվտանգության և արդյունավետության ապահովման նպատակով 2024 թվականին նախատեսվում է իրականացնել համայնքային, միջհամայնքային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ու տրանսպորտային օբյեկտների իմնանորոգում, այլ ընտրանքային ճանապարհների կառուցում, միջին նորոգում ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում՝ ինչը մշտապես կապահովի ճանապարհների և կառույցների պահպանվածությունն այնպիսի վիճակում, որը համապատասխանում է անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին:

- Բակերի բարեկարգումը:
- Ոռոգման համակարգերի և խմելու ջրի ջրագծերի բարեկարգումը:
- Տնտեսության տարբեր ճյուղերում ներդրումային ծրագրերի խթանումը:
- Համայնքում աղբահանության, շրջական միջավայրի պաշտպանության, փողոցների լուսավորության միջոցառումների իրականացումը:
- Մշակութային ժառանգության պահպանությունը և մասսայական սպորտի զարգացման խթանումը:
- Հանրության ներգրավվածության և իրազեկվածության բարձրացումը, տեղական ինքնակառավարմանը նրանց մասնակցության ապահովումը:
- Կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանումը, շահագործումը, նորոգումը, համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վերազինումն ու կառավարման արդյունավետության բարձրացումը:
- Գյուղատնտեսության և անասնապահության զարգացման խթանումը:

Ակնկալում ենք մեր համայնքի գործարար միջավայրի, ձեռնարկատերերի, բնակիչների աջակցությունն ու ակտիվ մասնակցությունը՝ համայնքի առջև դրված ծրագրային խնդիրների իրականացման, շոշափելի արդյունքների հասնելու և տեղական իշխանությունների որդեգրած քաղաքականությունը իրագործելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԻ ՎԵՐԼՈՒՄԱԿԱՆ ՄԱՍ

Գործիս համայնքի 2024թվականի բյուջեի նախագիծը մշակվել է հիմք ունենալով համայնքի 2023-2026 թվականներին հնգամյա զարգացման ծրագիրը, համայնքի 2024 թվականի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և համապատասխան „Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,“ և „Տեղական ինքնակառավարման մասին,“ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին, որի ձևավորման հիմքում ընկած են հիմնական սկզբունքները՝ ֆինանսական միջոցների պլանավորում, պահուստային ֆոնդի ստեղծում, խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը, հավաստիությունը և հստակությունը, հրապարակայնությունը::

Համայնքի բյուջեի պլանավորումն իրականացվել է միտումնային մեթոդով, որի ժամանակ հիմնվել ենք անցած տարվա ընթացքում փաստացի համայնքային բյուջե մուտքագրված եկամուտների հոսքի և առկա բազաների վրա:

Կանխատեսվող ծառայությունների քանակը և որակը հիմնականում կախված են կանխատեսվող եկամուտների ծավալից, առկա տնտեսական պայմաններից, մասնավորապես՝ սղաճից:

Գործիս համայնքի 2024 թվականի բյուջեն կանխատեսվում է՝

Եկամուտների գծով՝ 1 491 658,0 հազ.դրամ

Ծախսերի գծով՝ 1 491 658,0 հազ.դրամ

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Եկամուտների կանխատեսման գործընթացը իրականացվել է բյուջետային գործընթացը կարգավորող օրենսդրության համապատասխան:

Գորիս համայնքի 2024 թվականի բյուջեի նախագծում եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 1 491 658,0 հազ.դրամ, համայնքի 2023 թվականի բյուջեով հաստատված 1150157,0 հազ.դրամի դիմաց: Ծրագրված եկամուտները ավել են 2022 թվականի փաստացի հավաքագրված ընդհանուր եկամուտներից՝ 1375476,4-ից 116181,6 հազ.դրամով կամ շուրջ 8.5 տոկոսով:

Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 316098,4 հազ.դրամ (ընդամենը եկամուտների տեսակարար կշռի 21.2 %-ը), 2023 թվականի հաստատված 282169,0 հազ.դրամի դիմաց կամ 33929,4 հազ.դրամով ավել, իսկ 2022 թվականի փաստացի հավաքագրված եկամուտներից 24382,4 հազ.դրամով կամ 7.2 տոկոսով պակաս:

Հարկեր և տուրքեր

Հարկեր և տուրքեր՝ 2024 թվականի հարկային եկամուտները և տուրքերը ծրագրելիս օգտագործվել են մակրոտնտեսական այն ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին հարկատեսակների հարկման բազայի ձևավորման վրա: Ցուցանիշների կանխատեսման համար հիմք են ընդունվել նախնական վերլուծությունները, կիրառման առաջարկված մոտեցումները և հաշվարկները, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգիրքը, Տեղական տուրքերի և վճարների մասին Հայաստանի Հանրապետության օրենքները: Պետական տուրքերի գծով բյուջետային մուտքերի կանխատեսումները կատարվել են՝ ըստ նախորդ տարիների փաստացի հավաքագրումների միտումների, հաշվի առնելով ՀՀ օրենսդրության մեջ կատարված առանձին փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև պետական տուրքի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները:

Հարկային եկամուտները և տուրքերը 2024 թվականի համար բյուջեի նախագծով ծրագրվել են 200749,4 հազ.դրամ, որը 13.7%-ով գերազանցում է ընթացիկ տարվա հաստատված նույն ցուցանիշը: Սակայն 2.12 %-ով զիջում է 2022 թվականի փաստացի ցուցանիշը:

- **Գույքահարկը** նախագծով նախատեսվել է 140949,4 հազ.դրամ 2023 թվականի համար հաստատված 119300,0 հազար դրամի դիմաց, իսկ 2022 թվականի փաստացի ցուցանիշից 8376,2 հազ.դրամով կամ շուրջ 6.3 տոկոսով ավել:

- **Անշարժ գույքի հարկը** նախագծով նախատեսվել է 29 416,1 հազ.դրամ 2023 թվականի համար հաստատված 24361.1 հազ.դրամ-ի փոխարեն, իսկ 2022 թվականի փաստացի ցուցանիշը կազմել է 37959,2 հազ. դրամ կամ 22.5 տոկոսով ավել: Հողի կարկի ապառքները նախագծով նախատեսվել 7083,9 հազ. դրամ 2023 թվականի համար հաստատված 9150.0 հազար դրամի, իսկ 2022 թվականի փաստացի ցուցանիշից 2 903,85 հազ. դրամով կամ շուրջ 69,4 տոկոսով ավել:

- **Տեղական տուրքերը** ծրագրվել են 13800,0 հազ.դրամ՝ 2023 թվականի բյուջեով նախատեսված 12900.0 հազ.դրամի դիմաց, իսկ 2022 թվականի փաստացի ցուցանիշից 2.8 տոկոսով ավելի: Աճը սահմանված են „Տեղական տուրքերի և վճարների մասին „ՀՀ օրենքով սահմանված կարգով:

-Պետական տուրքերը 2024 թվականի համար նախագծով ծրագրվել են 9500,0 հազ. դրամ, որը 5.6 %-ով ավել է 2023 թվականի հաստատված 9000,0 հազ. դրամից և 1.8 %-ով պակաս՝ 2022 թվականի փաստացի 9671,2 հազ. դրամ ցուցանիշներից:

Պաշտոնական դրամաշնորհներ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված ցուցանիշերը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան ծրագրվել է 1167158.0 հազար դրամ՝ նախորդ տարվա 859586.4 հազ. դրամի համեմատ աճել է 307571,6 հազար դրամով կամ 35.8 %-ով:

Պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների /սուբվենցիաների/ գծով նախատեսվել է 2023 թվականի չափով՝ 8401.6 հազ. դրամ:

Այլ եկամուտներ

Այլ եկամուտները 2024 թվականի նախագծով նախատեսվել է 115 349,0 հազ. դրամ, 2023 թվականի համար հաստատված 105569.0 հազ. դրամ ցուցանիշի դիմաց:

-համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարները ծրագրվել են 4500.0 հազ. դրամ՝ 2023 թվականի բյուջեով նախատեսված 4500.0 հազ. դրամի դիմաց, իսկ 2021 թվականի փաստացի ցուցանիշից 2047.9 հազ. դրամով ավել:

-համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները ծրագրվել են 3500.0 հազ. դրամ՝ 2023 թվականի բյուջեով նախատեսված 4500.0 հազ. դրամի դիմաց, իսկ 2022 թվականի փաստացի ցուցանիշից 890.0 հազ. դրամով պակաս:

-այլ գույքի վարձակալությունից մուտքերը ծրագրվել են 8000.0 հազ. դրամ՝ 2023 թվականի բյուջեով նախատեսված 8000 հազ. դրամին հավասար, իսկ 2022 թվականի փաստացի ցուցանիշից 702.3 հազ. դրամով պակաս:

Գույքի վարձակալությունից եկամուտները ծրագրվել են հիմք ընդունելով վարձակալության հաշվառման բազայի ճշգրտումները, լուծված և նոր կնքված պայմանագրերը, պայմանագրերի փոփոխությունները, ինչպես նաև նախորդ տարիների մուտքերի հավաքագրման դինամիկան:

-քաղաքացիական կացության ակտերի գրանցման պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները ծրագրվել են 1999.0 հազ. դրամ, 2023 թվականի 1999.0 հազ. դրամին հավասար:

-վարչական գանձումների գծով ծրագրվել է 95350,0 հազ. դրամ, 2023 թվականի համար հաստատված 83570 հազ. դրամ ցուցանիշի դիմաց: Վարչական գանձումները իր մեջ ներառում է տեղական վճարները՝ 93850,0 հազ. դրամ և համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարները՝ 1500,0 հազ. դրամ: Այս վճարների գծով ցուցանիշները ծրագրվել են հիմք ունենալով ավագանու կողմից սահմանված Գորիս համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, աղքատության կազմակերպման համար սահմանված դրույքաչափերը, համայնքային ենթակառուցվածքային մանկապարտեզների և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայությունից օգտվողների համար սահմանված վճարները, ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար, անշարժ գույքի հասցեավորման համար և համայնքի կողմից

կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար:

ԲՅՈՒՋԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԱՏԵՍՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գորիս համայնքի 2024 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 1491658,0 հազ. դրամ: Ծախսերի ամբողջ ծավալի 100 տոկոսը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե):

Նախագծով նախատեսված բյուջետային ծախսերի ծավալներում

-Քաղաքացիական պաշտպանությանն ուղղված է ծախսերի 0.3%-ը,

-սոցիալական բնագավառի՝ (կրթություն, սոցիալական ապահովություն) ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 39,4 տոկոս,

-տնտեսական հարաբերությունների գծով ծախսերը՝ 0.9 %-ը,

-շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված է ծախսերի՝ 13.5 տոկոսը,

-բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ՝ 8,2 տոկոս,

-մշակույթին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 7,3 տոկոս,

-ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով՝ 18.4 %, կառավարման մարմնի պահպանման ծրագրով նախագծում ծախսերը կազմում է ընդհանուր ծախսերի 16.2 տոկոսը:

-Նախատեսվել է նաև պահուստային ֆոնդ վարչական եկամուտների 12 տոկոս:

Գորիս համայնքի 2024 թվականի բյուջեի նախագծով ծրագրված ծախսերը՝

թվում կառավարման մարմնի պահպանման ծրագրով ծրագրվել են 241700,0 հազ.դրամ:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործունեության կազմակերպում /պատվիրակված լիազորություն/ ծրագրով նախատեսվել է 1999,0 հազ.դրամ

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ այլ դասերին չպատկանող ծրագրով նախատեսվել է 30500,0 հազ.դրամ գումար, որն իր մեջ ներառում է համայնքային գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումները, ինչպես նաև դատարան ներկայացվող դիմումներ, հայցադիմումների համար սահմանված վճարումներ, նաև տեղեկատվական ծրագրերի և հանրային հատվածի հաշվապահության և հանրային այլ ծառայությունների կազմակերպմանն ուղղված միջոցառումների ֆինանսավորումը:

Քաղաքացիական պաշտպանության ոլորտում՝ 5000.0 հազ.դրամ

Գյուղատնտեսության ոլորտում՝ 5150 հազ.դրամ

Տրանսպորտի ոլորտում ծրագրվել է 8000.0 հազ.դրամ, նախատեսվել է ներհամայնքային ճանապարհների ու փողոցների, բակերի, մայրերի, կամուրջների բարեկարգման, նորոգան, տրանսպորտային միջոցների և հետիոտնի անվտանգ երթևեկության համար:

Շրջակա միջավայրի ծրագրով նախատեսվել է 201000,0 հազ.դրամ, Գորիս համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման, կանաչապատ տարածքների պահպանման, պլաստիկ թափոնների

վերամշակման, Գորիս քաղաքի Վարարակ գետի հունի մաքրման, հենապատերի վերականգնման, եզրառունների վերանորոգման համար:

Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 64900,0 հազ.դրամ:

Հանգիստ, մշակույթ և կրոն ոլորտի ծրագրով նախատեսվել է 109500,0 հազ.դրամ :

Կրթություն ծրագրով նախատեսվել է 565000,0 հազ.դրամ, որից նախադպրոցական կրթությանը կուղվի 395000,0 հազ. դրամ, արտադպրոցական դաստիարակությանը՝ 170000,0 հազ. դրամ:

Զրամատակարարում ծրագրով նախատեսվել է 22600,0 հազ.դրամ

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) ծրագրով նախատեսվել է 35000,0 հազ.դրամ

Սոցիալական աջակցություն ծրագրով նախատեսվել է 22800,0 հազ.դրամ աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին

Տարեսկզբի ազատ մնացորդը կձգգրտվեն 2023 թվականի բյուջետային տարվա ավարտից հետո: Համայնքի ավագանու որոշմամբ տարեսկզբի ազատ մնացորդը կօգտագործվի տվյալ տարվա բյուջեով նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման կամ չկանխատեսված ելքերի ֆինանսավորման նպատակով, մնացած մասը կուղղվի համայնքի ֆոնդային բյուջե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ